№ 20 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍ 5

1896

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍ 5 № 20


# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ


ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղրն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Teheran Rédaction ASTGH-AREVELAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի Կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. իւրաքանչիւր բառին 1 շահի:


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Ինչ օգուտ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ խմբագրութեան. Նամակ Դամբէժից. Ամուսնութեան առավելութիւնքը. Նամակ Թէհրանից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ արտաքին լուրեր. Աստղ-Արեւելեանի պատասխաններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դիլլոնի նամակը.


## Ի՞ՆՉ ՕԳՈՒՏ

----

Ահա մօտ երկու տարէ, որ Բ. Դուռը եւ Եւրոպական քիոշքը դարձել է եւրոպական տէրութիւնների անընդհատ սակայն ապարդիւն դիմումների ասպարէզը. երբեմն լսեցինք համերաշխ դիմումներ Հայաստանի բարենորոգումների ծրագիրը ընդունեցնել տալու համար, որ տեւեց երկար ամիսներ որ վերջապէս ի՞նչ օգուտ տուեց: Լսեցինք մի ժամանակ Հայաստանի կոտորածների մասին եղած դեսպանների միջարք դիմումները որով պահանջում էին անմիջապէս դադարեցնել տալ այդ կոտորածներ եւ խժդժութիւնները բայց ի՞նչ օգուտ, չէ որ այս օր էլ նոյն իսկ դիմումներ անող դեսպանների քթի տակին է կատարւում շատ տեսակ խժդժութիւններ մի օր էլ ուրախ լսեցինք թէ դիմումներ է լինում Հայաստանի 6 նահանգների վրայ եւրոպական controle վերահսկիչ հաստատելու համար, որը երկար ժամանակ ձգձգուելուց յետոյ, վերջապէս Սուլթանը բարի գտնեց Ոսլիզբէուրէին ապտակելով Հայաստանի բարենորոգումների գործադրութեան համար Շաքիր փաշան ուղարկել մի քրիստոնեայ օգնականով. որ ահա մօտ 9 ամիս է որ ամբողջ Հայաստանը պըտտելով հրահանգներ է տալիս քիւրդ աւագակապետներին եւ թիւրք աւազակ կառավարներին որ Սուլթանի ծրագրած բարենորոգումները ճշտութեամբ գործադրեն (՞՞!!) որի օրինակն ինքը Շաքիր Փաշան բարձրանալով անձամբ տալ, վերջերս իւր քրիստոնեայ օգնականը բանտարկելով, այն յանցանքի համար որ պահանջել էր մի քրիստոնեէի դատն արդարութեամբ վարել։

Իսկ այսօր էլ խեղճ եւ յոգնած դեսպանները մոռանալով անցածները, սկըսել են միմիանց յետեւից դիմումներ անել Բ. Դրան, պահանջելով Նորա իշխող Սուլթանի սոսրագրութեան եւ խոստման յարգում եւ գործադրութիւնը Զէյթունի կառավար ընտրելու նկատմամբ սակայն ի՞նչ օգուտ որ այս անգամ էլ նոյն արդիւնքը պիտի ունենայ տեղն է հարցնել թէ ինչ օգուտ այսքան որ դիմումներից, եթէ լինում են միայն իբրեւ լինձեակերպութիւն ձեւակերպութիւննոք ասում որովհետեւ հաստատենք որ եթէ այդ դիմումները լինէին քրիստոնեայ տէրութիւնների միացեալ ուժով եւ կամքով, եւ դեսպանները ճշմարիտ համերաշխութեամբ իրենց բոլոր պահանջները մի mandat-ով միասին դնէին Բ. Դրան առաջ, ոչ թէ մէկ, այլ հարիւրաւոր Սուլթանների կամքը խորտակւէր, եւ պիտի լուծւէր հայկական կամ աւելի առաջ երթանք արեւելեան ծանր խնդիրը. բայց ոչ. այսօր մենք արեւելեան քաղաքականութեան ասպարէզ Կ. Պօլսում ամեն ինչ այլ գոյնով նկատուած ենք տեսնում ամեն մի տէրութիւն ունենալով իւր Ասիական քաղաքական շահ կամ մտադրութիւն, ամեն մի դիմումի կամ պահանջի ժամանակ մի նոր տեսակ անհամաձայնութիւն կամ արգելքներ է ծագում, որոնցից օգտըւելով թիւրքաց Սուլթանը այս բոլոր դիմումներին պատասխանումէ սրտալից ծիծաղով....

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԻԼԼՕՆԻ ՆԱՄԱԿԸ

----

Շարունակութիւն № 18-ից

Մարդասէր մէկը սարսափահար պիտի լինի երբ (թիւրք) բանտը այցելելով տեսնէ խեղճ բանտարկածի ձեռ ու ոտը թոկերով ամուր կապած եւ մութ խորշում ընկածէ, որը ո՛չ մի գանգատ անգամ անելու տրամադիր չէ եթէ մինչեւ անգամ լսած լինի բանտապանից թէ մահամէ դատապարտուել եւ կամ թէ ինքը կախաղան պիտի բարձրանայ:

Ազգասիրութեան ծրագրի գործադրութեան առաջինքայլն էր, ժողովրդին այդ առաջնեկը:

Այդ շատ բնական է եւ հեշտ. մանաւանդ այն երկրում, որ պաշտօնեաները ամիսներով ռոճիկ ստանալուց յետոյ պիտի բաւականանան մի չափին գումարով որ իրենց շնորհում է կառավարութեան կողմից. «վերջին 5. ամիսը մէկ փարա անգամ չեմ ստացել, որ կարողանամ ինձ համար հագուստ առնեմ» ասեց պաշտօնեան որ մինչեւ Էրզրում ինձ պիտի հսկէր գիշեր եւ ցերեկ: Մի անգամ Քուրթէի հեռագրատան տեսչից հարցրի «արդեօ՞ք ձեր ռոճիկը կանոնաւորապէս վճարումեն». «ո՛չ էֆէնդիս» պատասխանեց տեսուչը. Ահա 8. ամիս է որ ո՛չինչ չեմ ստացել, բացի քայքայմի մէկ ամսուան ռոճիկից» Ապա ինչպէսէք կարողանում ապրել հարցրեցի, «վերջին աղքատութեա՞մբ». պատասխանեց «բայց Պ. տեսուչ, դուք պէտք է վերջապէս դրամ ունենաք ապրելու համար եթէ ոչ ինչպէս կարողէք կենդանի մնալ «ասեցի» Այո իրաւունք ունիմ, բայց ոչ քասական, Աստուած բարի է եւ ինձ անօթի չի թողնում, չէ որ հիմայ նոյն իսկ դուք ինձ մի քիչ դրամ տուեցիք» «Այո տուեցի, բայց այդ ձերը չէ այլ հեռագրի արժէքներ վճարել որ կառավարութեան պիտի հասնի» պատասխանեցի տեսչին,» թէրեւս մոռացած լինիմ ես, որ կառավարութիւնը կարողանայ այդ դրամը գանձել որովհետեւ ստացածս բոլոր դրամներն (հեռագրերի արժէքը) ինձ համարեմ պահում. ի հաշիւ իմ ռոճիկին թէեւ այդ մի մեծ գումար չի լինում, բայց վերջապէս ինչ էլ որ լինի պահումեմ ինձ համար» ասեց տեսուչը: Թէեւ սորանք փոքր պաշտօնեաներին. բայց եւ այնպէս իրենց վիճակը նոյնն է ինչպէս մի դատաւորի, բարձր պաշտօնեաների. կառավարիչների եւ վալիների եւ այն մինչեւ անգամ ինչքան բարձրանամէ պաշտօնը. այնքան ընդարձակւումէ պաշտօնէի ագահութեան սահմանները:

Բիթլիզի վերջին կառավար Թահսին Փաշան, ագահութեան ժամանակամիջոցում, թիւրք աստիճանաւորների մէջ, առաջնակարգ օրինակէ ներկայացնում սոսկալի ագահ եւ կծծի լինելուց բացի, այնքան անողորմէս ինչպէս Ugolino ի թշնամի Ruggeri ին, եւ այնքան սանձասէր, ինչքան Spenser ի «Faery Qneen» ի գնաապետ Malleger ը. որը բոլոր հարուստ հայերին առանց որեւէ մեղադրելի յանցանքի եւ պատրուակի բանտարկելու սովորութիւնը հաստատեց. որոնց ազատութիւն էր տալիս միայն այն ժամանակ երբ իրենց առ... [illegible] մեծ մասը տալիսէին փաշային իսկ հակառակ դէպքում թշուառ բանտարկեալներին ենթարկումէին այնպիսի պատիժ-

